Աննա Սարգսյան

Տագնապ

Մի կաթիլ արցունք տվեք ինձ՝
ցավս անլաց է մնացել,
աչքիս աղբյուրը ցամաքել,
նույնիսկ նա է օտարացել:
Էլ համահունչ չէ կամարը շուրթի՝
ավերակ դարձած տաճարին հոգու,
թե բնությունն է այս տվածը, ուստի՝
խռովքը նույնպես օտար չէ Աստծուն:
Անկու՞մ է, բեկու՞մ, դա՞րն է անհաջող,
մարդիկ դարձել են՝ արժեք չունեցող
սուտ "արժեքների" կամավոր մի զոհ,
տկար ու անմիտ, բայց իրենցից զոհ…
Հավատն է միայն ստիպում կառչել
ցնցոտի դարձած կյանքի քղանցքից,
որ կարողանանք ցավից հույս քամել
ու, ինքնությունը չկորցնենք ահից,
իսկ բարության սակավ մնացած
նշույլներն՝ անհագ կարոտով որսանք,
ինչպես մի ճնճղուկ, որ պատահմամբ
գտել է ընկած չոր հացի փշրանք:
Հեռվում տագնապի ղողանջ եմ լսում.
հին տաճարում է, գու՛թ է աղերսում:
Ու թե ամառ է՝ ինչու՞ եմ մրսում,

ինչու՞ է ցավից հոգիս արտասվում…
Դիլիջան
23.07.2023թ.